

Խմբագրութեան սրբագրէ, ոչ կազմակերպէ . . . չի նայելով իր պղծութիւնը . . . տկար զօրութեանը գոթութիւնը պէտք է կր յարձակի իրմէ շատ վեր ոյժով . . . դէմ (Հայրենիքի խմբագրութեան վրայ) իսկ վերջնոյն բնաւ իրեն կարեւորութիւն չտալն աւելի կը գրգռէ զինքը . . . Խնչ ընէ Ձիթճեանը զուրբ ընէ . . .

Անիկայ կը մտածէ միջոցով մը պաշտօնը զէթ զիջեցիկ սեռը գրելէ Հայրենիքի մէջ . . . նոյն նպատակաւ «այսպէս կոչելով ինչոր մը հրապարակ» հանեց և հայ կիներ եկեղեցիին բնակէն իօսել չի խօսելու նմանեցունել ուղեց . . . Ձիթճեան իր փափաքին հասնեցուց կրպար գտած էր, բայց ինքն ալ կը ըսէ որ շատ կարծ տեսեց այն ժամանակը . . . Այդ ապարդիւն փորձերէն ալ յոստահատ օգնութեան կանչեց իր ընկերը . . .

Խմբագիր Վ. Շահինին էր որ առաջին անգամէն իր ընկերով պակասը պիտի լրացունէր . . .

Երկու թերթերուն մէջ վիճաբանելիք նիւթ մը կար «հայ գրականութիւնը օտարին արեւը եղած է . . . թէ ոչ» . . . Հայրենիքի թղթակից Պ. Ա. գրեց ոչ միայն օտարին արեւ եղած չէ, այլ և գրչոյցում ալ է . . . բայց նոյն թերթի խմբագիրը թ. Չարչաֆճեան կէս սիւնակով հաստատեց զայսպէս չըլլալը, միեւնոյն ժամանակ հաստատեց նաև օտարին արեւ չըլլալն ալ . . . հապա ինք իր արեւը եղած է և այլն . . . «Չայն Հայրենեացոյ աւելի

ծիշդ . . . Չարչաֆճեանի ճիշդ խմբագրութեան լուսն էր . . . այս անգամ կուտայ ասպարէզը միւսինն էր . . . Պ. Վ. Շահինի իր թերթի վեց սիւնակները մտած էր անհամ պարբերութիւններով, իբրև թէ պատասխանը գրած էր Հայրենիքի խմբագրին . . . այն թերթը աչքէ անցնելու ձանձրոյթէն ազատ մնացողները որքա՞ն բան հասկցած են, կարգացողներն ալ անոնց հաստատ հասկցան . . . կարգ մը հայհոյութիւններ ալ աւելի . . .

Անվերջ հայհոյանքներ մտիկ ընելու բնաւ ժամանակ չը կար, անոր համար Հայրենիքի խմբագիր թ. Չ. ուղեց կարծ խօսքով մը զվերջ տալ այն հարցին . . . բայց ընթերցող, առաջ թէ ի՞նչ հանգիստեցաւ . . .

Պ. Վ. Շահինի երբեմն կուտանէր խմբագրի և երբեմն ալ կէս թղթակցի պաշտօն կը վարէ, փութաց մտնել «Իրտող» ծածկանունին տակ և իբր պատասխան հայ գրականութեան գրեց . . . Հայրենիքի խմբագիր թ. Չ. հայրը ըրբացած է, հա՛, հա՛, հա՛ թ. Չ. հօգեգրայրն ու անոր որդին ալ թրքացած են եղեր . . . այդ սուտը ոչ միայն պոչուտը է այլ և կոտորակը . . . և որչա՞փ ճիշդ ու ճիշդ պատասխանն է «հայ գրականութեան» . . .

Կեցե՛ս Պ. խմբագիր, ի՞նչ ծաղրալից յօդ տածներ ունիս եղեր . . .

Չեմ ուզեր ընթերցողը զբաղեցնել այս լինիքով . . . իմացողին մէկ բաւ է, չիմացողին ալ իրենք թող մտածեն . . .

Գրութիւնս վերջացնելէ առաջ կը փափաքէի թերթագրութիւն մը ընել «Չայն Հայրենեացոյ խմբագրութեանը» . . . բաւ է ինչ որ խառնեցին, ինչ որ պղտորեցին, գէթ սակից վիճի իրենց առաջին թուով խոստացած ուղղութեանը հետեւէին . . .

Վախմաթ թէ Պ. Բրուտի բաժնէրը իրականանան, արդե՞ք կը մտաբերեն «Չայն» ի խմբագրութեանը . . .

Մեծ ընթերցողուն է այն իմացե՛ք . . .

ԻՐԻ ԱՇՏՈՒՐԻ

ՊՈՒՐԿԱՉ, 20 նոյն.

Արշալի որ կարելի էր մի քանի ամիսներէ ի վեր սեղանոյս հայ ժողովրդեան բարոյական կեանքէն գրելով, ջանացինք ցոյց տալ զայն դէպի կործանում առաջնորդող փաստակար տարրը . . . իսկ այժմ նոյն հոծ բազմութեան նիւթական կացութիւնն մեր աչքի առջև ունենալով կը ցանկանք գրել «նարժումն յարկելի ընթերցողներուն ծանօթացնելու և միանգամայն իրենց ուշադրութիւնը հրաւիրելու այդ կացութեան վրայ . . .

Տեղս կը գտնուին այժմ 1000 չափ գաղթական հայեր, որոնցմէ կրնամ ըսել թէ 100 ին 5ը միայն հազիւ հազ օրուան հացաբիւն ունին իրենց վրայ և կամ կը շահին . . . իսկ մնացեալներն անասնելի թշուառութեան մատնուած և օրերով իրենց սնանկութիւնն մէջ փակուած մնացած են, առանց ուտելու և խմելու . . . Ան-

ձամբ ատնցմէ մի քանիներն տեսայ իրենց սնանկներու մ 3-4 օրեր փակուած անօթի ծարաւ մանր երախաներու նման արտասուք կը թափէին, բոլորովին տոգոյն, յոյսեր ամէն կողմերէ կտրած ինչ ընելիքն չեն գիտեր, աշխատելու գործերն բոլորովին դադարած են . . . Բայց ցաւալին այն է՝ որ այդ խեղճերուն անտանելի կացութիւնը ի նկատի առնող և օգնող մէկը չկայ . . . ասոր հետեւանք շատ պարզ է որ մահ պիտի ըլլայ . . . Այդ խեղճերն որ ժամանակին ազգային զանազան հանգանակութեանց և յեղափոխութեան առթիւ քրտնաթոր աշխատութեան արդիւնքն իրենց լուսաներն—իսկ չի խնայեցին հայրենեաց Սուրբ գործին կատարման նուիրելու, այսօր իրենք են որ օգնութեան կը կարօտին . . . և ձեռք կարկառող մը չի գտնուիր . . . Ի՞նչ . . . մի թէ մարդասիրութիւնը, զոր թը և բարեգործութիւնը ալ աշխարհէս վերացա՞ւ . . . չէ՞ որ ատոնք ալ մեր եղբայրներն են, մի արիւնն են, ո՞ր կը մնան մեր Պարկազի կարգ մը լաշոր բրդող յեղափոխական, ազգասէր ու հայրենասէր պարտնեհին . . . Մի թէ ժողովրդեան հեծեծանաց, նկույթեան ու թշուառ կացութեան մասին չեն լսեր . . . Ինչո՞ւ միայն իրենց սկանչները գրամ ու կարողութիւն ունեցողի կողմը կը դարձնեն ու զանոնք կը պաշտեն—վասն զի անոնցմէ բան մը կը սպասեն—չի վայելե՞ր ազգասէրին որ այդ սկանչը քիչ մըն ալ տառապելիւն կողմը ձեռ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՐԱՖՖԻ

Մակերեսական կոմիտէի օրկանը Les Reformes այս օրերս սկսաւ հրատարակել Րաֆֆիի երկասիրութիւններէն Չնչարիսիսն վերջով . . . թարգմանութիւնը որ հայ բնագրի ու առեւտրի հետեւողութեամբ եղած է, շատ մաքուր ու խնամքով Պուլկարեանի վերածուած է . . . անաղարտ պահելով հեղինակի գրուածքներուն թովիչ ոճը ու ոգին . . . Հայ գրականութեան մերձեցումը միեւնոյն դառնութիւններու բողոքակից եղող ազգերու գրականութեան հետ, փայլուն ապացոյց մըն է այն եղբայրական սեղանակցութեան քր երկու գերի-ժողովուրդներու հիպատագիրը իրարու հետ միացուցած է . . .

Այս ինքնին պատեն առիթ մըն է նաև մեզի պուրկարանայերուս ըմբռնելու Րաֆֆիի մեծ նշանակութիւնը . . .

Րաֆֆին արտայայտիչ եղաւ հայ ժողովրդի այն ձգտումներուն, որ Բամաթ-Բաթիլայի Արովանցի ու Նարսիսեանի լիւսնէ լիսնիք

էին, որոնք իրենց քնարներով հայրենեաց արցունքներուն ձայն աւելնելով, երգեցին մեր գտնն արիւննա յիշատակները, արծարծեցին իրենց մտքը ու հորիզոնի վրայ նշմարող նոր երևոյթներուն հը պատասխանեցին . . . ձիշդ ժամանակին Րաֆֆին իր զիտող աչքով ու թափանցող մարտիկ եկաւ առաջնորդ ըլլալու հայութեան այդ նորայայտ երևոյթներուն, որք յետոյ իր գրական աշխատութիւններու շարժախիթը ու հիմնաքարը եղան . . . Նա սկսեց հեռապնդել այդ երևոյթները իր սրտը պաշտօնարներու ու հայեացքներու ներդաշնակութեամբ աւելի բազմակողմանի ակնակետով . . . Սկսեց հրատարակել մի շարք գրուածքներ, որոնց մէջ նախ «հասարակ» հայտ հասարակական ձգտումներու բուն պատճառները, Այդ ձգտումներն էին—ուրեմն հասարակական անկախ կեանք . . . Իսկ այդ ձգտումներու բուն պատճառը ու շարժախիթը Րաֆֆին տարրալուծելով կը գտնար վայրագ բանակալութեան լուծը՝ այսինքն Տաճկաստանի ներկայ այն պետական ճիւղային կազմակերպութիւնը (administration որին զոն է հայութիւնը, Այս միտքը Րաֆֆիի գրուածքներուն ամայր-միտքըն եղած է . . . նա մտէն զիտելով հայութեան ընդհանուր թշուառութեան պատճառները և իր հայրականութեան փոստ ու փոսնգաւոր պայմանները, ճարտար փորձութիւն ման առնէ ինչ ինչեց, զննեց ու վերականգնու-

թեան նշոյլներ աննալով զարմանիչ զեղազիրը պատրաստեց . . . 1.—այդ թշուառութեանը ազատելու ուղիղ ճամբան ցոյց տուաւ . . . 2.—միջոցներ առաջարկեց այդ վատ պայմանները բարեկարգելու և 3.—հայութեան որոշ տարրը վտանգութեամբ մատնանիչ ըրաւ իբր պաշտպան և իբր ջատագով հայ ժողովրդի քաղաքացիական ու մարդկային իրաւունքներու և գոյութեան . . . ձիշդ այս երեք կէտելու յաջող լուծումովն է որ Րաֆֆին [կը հանդիսանայ տաղանդի իսկական կոչման մէջ, իր հասարակական գործիչ ճշմարտպատ կերով և իր ցեղին մատուցած արդիւնաւոր ծառայութեան բոլոր փայլովը ու նշանակութեամբը . . . Րաֆֆի իբրեւ զազանգաւոր գրող, նուրբ հոստատութիւն ու հոստատութիւն ունեցող, այդ հազիւ նշմարող նորածագ երևոյթները դրաւ կենսական կացութեան յայտնի դիրքի մէջ, ամբողջ գործողութիւններու մէջ . . . յասով բերաւ գործող անձերու այդպէս այդ երևոյթները կեանքի վերածնց . . . այնպէս որ այդ ամբողջ կեանքի իմաստը, էութիւնը ու նպատակը համապատասխան եղաւ այդ երևոյթներուն քնաւորութեան ու ոգւոյն . . . Մէկ խօսքով Րաֆֆին իր իտալական երազներուն ճշմարտ պատկերը արտացոյցեց իրականութեան մէջ իրենց իսկական գոյնբովը . . . Ինչ որ յաջողեցաւ . . .

Ունենալով յստակ ու ուղղադատ հայեացքներ հայոց կեանքի այն

հասարակական խնդիրներու վրայ, որոնք իր աչքին էին զարկած, նա իր գրուածքներով և իր բնիկ հանած հերոսներու շրթներովը զարգացուց ու իրաւաբանօրէն ապացուցեց իր զաղափարները և իր համոզումները . . . նա ամենապարզ օրինակներով փաստելով ու գործողութիւններով համոզեց ընթերցողին . . . իր գրութիւններու բուն իրական մասը իսկ ծառայած է հեղինակի զաղափարներու, համոզումներու հաստատութեան իբրեւ լուսարանող ու բացատրող ֆակտոր . . . Այդ բոլոր մէջն է Րաֆֆիի գրական աշխատանքի (tendance) . . . նա ներառեց ու սովորեցուց (populariser) գարուս բարձր ու նոր միտքերը ժողովուրդի ամենա անթափանց ու մութ խաւերու մէջ և այս պատճառով է որ զինքը առաջին պրոպագանդիստ կը նկատեն . . . Կոյճեթի մէջ Ասլան այսպէս կը խօսի . . . սուրաւորութիւնը մարդու հասարակական կեանքի միջնորդան է, որի մէջ նա զարգանում է, կատարելագործվում է և հասնում է իր մարդկային բարձր նշանակութեան . . . Որքան ճնշված որքան սահմանափակված լինի այդ միջնորդը, այնքան մարդը, ծոյլ և քիթամիտ կը մնայ . . . Ազատութիւնը մարդ սովորում է ազատութեան մէջ . . . Իսկ ինքնին մեջ Րաֆֆին Պալասեան ազգերու անկախութեան ձգտելու ու ապստամբութիւնը իրաւացի կը գտնայ և կըսէ ժամանակն է որ հայերն ալ մտածեն իրենց հանգստու-

լով անոր օգնութեան ձեռք երկրնցունէ . ճշմարիտ ու արդարագատ հայ ազգասէրն ի մի բան պարտի յարգելու սիրել թէ մէկը և թէ միւրը . և մանաւանդ ի վերջին զամենայն վերջինին այլուզորմ ձայնին մտիկ ընելով պէտք եղածն ի գործ դնէ անոնց ապրուստի մասին :

Ինչպէս որ ասկից առաջ «Նար-ժում»-ի 136 թուին մէջ յիշած էի, նոյնը կը կրկնեմ թէ՛ յիշեալ բեռնակիր դասակարգն իր գոյութեան պահպանումը կը պարտի աշխիւններուն, վասն զի որքան որ անգործութիւն տիրէր, և թշուառութեան ենթացումն, նշանակութիւն չէր ունենար իրենց համար . ինչու որ կրնային ամիսներով ապառիկ ուտել անոնցմէն, մինչեւ աշխատութեան մը վերսկսելը և ապա յառաջ եկած արդիւնքէն կը վճարէին : Ահա այդպիսով մինչեւ ցայսօր ապրեցան, իսկ հիմա խեղճ աշխիւններն ալ չեն կրնար ընել այն ինչ որ ըրին մինչեւ հիմա . որովհետեւ պատուէ ինկած են . ուսկից որ գնեցին չի կրցան ժամանակին վճարել . հետեւաբար պարտաւորեցան ապառիկը կանխիկ վերածել . բաց աստի մի քանի աշխիւնք ալ հարկադրուեցան գոցել իրենց խանութը, որմէ առաջ եկաւ ծայրայեղ թըշուառութիւն :

Արդ՝ հրաւեր կը կարգանք բռնոր մերազնեայ ազգասէրներուն որ ի սէր մարդասիրութեան և

հայրենասիրութեան՝ օգնութեան հասնին այն թշուառներուն, զէթ մահուան ճիրաններէն զանոնք փրկելու համար . թող հաճին միջոցներ ձեռք առնուլ, որ առաջ ինչ որ հարկ է ընել ընեն . չըլլայ որ մեր անտարբերութեամբն ազատ երկրի մը մէջ մեր աչքին առջեւ տանց սովամահ լիակտու պատճառ լինինք . ինչ որ եղաւ բարբարոս երկրի մը մէջ ասկից առաջ . . . Եթէ նշանակութիւն չտանք այդ խեղճ ողորմելի կացութեան, այն ատեն մենք դատապարտեալներ և նախասանց արժանի ենք, իսկ եթէ հոգ տանինք կրնանք աճնչան ծախսով մը փոխադրել անոնցմէ գէթ մաս մը այնպիսի տեղեր, ուր գործ կը գտնուի, և կրնան աշխատիլ ու ապրիլ :

Արեւմտեացիք է Պալիարիոյ իւրաքանչիւր հայաքաղաք ժամ առաջ միջոցներ ձեռք առնելով հանդանակութեան սկսին, և եկած արդիւնքն հաճին տեղույս Պատ. Թաղ. Խորհուրդին զրկել, որպէս զի անոր միջոցաւ անմիջապէս իր նպատակին գործադրուի, այսինքն որոց որ արժան է ճանապարհորդական ծախք մը վճարելով հեռացնէ քաղաքէս իրենց կեանքը փրկելու համար : Եւ այսպէսով խիղճներն իս հանգիստ և անհատական պարտականութիւններ լիովին կատարած կը լինեն :

ԳՐԾՈՂ

(—)(—)

թեան վրայ ու իրենց երկրին տէրը ըլլան : Այսպիսի հատուածներ շատ կրնանք մէջ բերել եթէ լրագրի սրահները ներեն . եւ մեզ զէթ-յան-դիման կը գանաք այդ ապացուցուած ճշմարտութիւններով յեղափոխութեան նախաբերկոյնն առջեւ որ Բաֆֆին մեզ կը հանէ : Նա չը բաւականացաւ միայն հեռուէն, հազիւ մշուշի թեւերէն ազատուած ազատ ճամբայ մը մատնանիլ ընել, այլ ինքը առաջ ինչալով հարթեց ամէն ինչ, ու միայն մեզի թողուց նպատակէսին հասնելու յոգնութիւնը : Խորազնին ակնարկ մը բաւական է իր գրութիւններուն որ իր տեսարան հանած հիւրըներու գործողութիւններէն զանաք այն միջոցները եւ քր Բաֆֆի նպատակայարմար կը գտնայ յեղափոխութեան : Զուլայի հոս մէջ Սարհաման է որ ընդունած է աւազակային կիւ պարանք . հալածեալ իր ծննդավայրէն, անձուռէր ու քաջ երիտասարդներէն կազմած է մի զինեալ խումբ, կասպատակէ ու կը թափառի Հայաստանի գաշտերը ու լեռները . պատպան կը կանգնի թշուառութիւնը ձեռք ժողովուրդի բռնաբարութեան իրաւունքներուն : Սարհամանի խումբին մէջ կը գտնանք ամէն միջավայրերէ մութ գէթեր, ամենէն նուրբ կրթութիւն ստացողէն մինչեւ յետին ոճրագործը . սակայն ամենուն սլախն մէջ վրէժխնդրութեան կայծը բոյն դրած, Այդ գինեալ խումբն է որ ասուպի նման տեղ տեղ կերելու . մերթ թաղ զիւրացին

կը խրախուսէ, մերթ աւազակարարոյ քիւրաք կը սարսափեցնէ : Բաֆֆին Հայաստանը մէկէն ի մէկ կերպարանափոխելու անհեթեթ ծրագրներ չմտակեց, եւ ոչ ալ ցուցուց . նա էլ զօրութեան կանոններուն վրայ հիմնուելով իր ընդգծած յառակապիժերը բնական հոսանքին տուաւ : Նա լաւ ըմբռնած էր որ Սարհամանի խումբի նման զինեալ խումբերը պիտի կրնան օգուտ մը տալ հայրենիքին :

Իբր շարունակութիւն Բաֆֆիի գաղափարներու գործողութեան՝ Գաշտակցութիւնը չէ ինչպէս իր լաւ ուժերը նուիրելու երկրին խորքը կազմակերպեալ ֆէդայական խումբերուն : աւելի հոս ու վայր զինուորական ուժի վերածելու . որովհետեւ ապագային այդ շարժուն զինամարզային դպրոցներէն պիտի ելլան թէ հայ զինուորը եւ թէ հոգեկաւոր գաղափարական աւազակապետները . որոնք կատարութեան քթին հետ խաղալու յանդիմանութիւն պիտի ունենան : Անուրանալի է սակայն որ Պ. Փորթուգալեան ինքը առաջինը եղած է Բաֆֆիի ձգտումները իրական քայլի մէջ դնելու աշխատող . Արմենիայի առջի թիւերը այդ ստղատակ զինային խումբերուն անհրաժեշտութեանը ու պէտքականութեանը նուիրած էին . եւ վաւարութեանի նշանաւոր անտաքեալներէն Պ. Ա. Ե.

ԹՈՒՐԲՈՅ ՓԱՍՏԱՐԱՆԸ

Ազգ. վերակազմեալ յեղափոխական կուսակցութեան օսկանին Բ. տարի թիւ 19 թերթին մէջ կարգացի «Վաղուան Ապահովագրութիւնը» վերնագրով յօդուածը :

Եւ յանկարծ սկսայ մտածել արդեօք այդ գրողը այն մարդուկն է որ մինչեւ վերջին օրերն կը պոռար և կը դրէր թէ . յեղափոխականները պէտք է լըրջօրէն գրեն, գործեն ու խօսին :

Միթէ այս այն յեղափոխական գրողէն է, որ լոկ իր կասկածելի անձը պահելու համար ամէն տեսակ մեքենայութիւններու կը դիմէ . և պէ՞տք է ալ այսպիսիներու շահաւականութիւններու խաղալիք ըլլալ, անկից բարիքներ սպասել : Կը վայելէ հայ զարգացած դասակարգին որ թոյլտարէ այսպիսի բարոյապէս ընկածներուն որ ելլան «Վաղուան Ապահովագրութիւնը» վերնագրով յեղ. օսկանին մէջ ընդհանուր ազգի կողմանէ արգահատանքի արժանացած Պատրիարքին պաշտպանողական և հայ ազգը բնաջինջ ընելու աշխատող դաման կառավարութեան փառաբանական ճամբաներ ստղծեցնել . լսեցէք ու սեւեք ինչեր կը գրէ մեր քաղաքագէտ յեղափոխականը :

Պ. Խմբագիրը, Օրմանեանին կառավարութեան զրկած հրաժարականի վրայ խօսելով կրտէ . «Պատրիարքը քաղաքական բան-

տարկեալներու ազատութիւնը ևս չի կը պահանջէ :

Հայոց քաղաքական բանտարկութեան թուականը 1880—81 ին կը բացուի Էրզրում, յեղափոխական մարմնի մը գոյութեամբը և այլն » : Այս մասին շատ մը անօգուտ մեկնութիւններ ընելէ վերջ կը շարունակէ . «Սուլթանը և իր կառավարութիւնը չեն կրնար նսեւ Օսմանեան պետութեան ամէն կողմը Պօլիսն ալ մէջը ըլլալով, հօյնեց ազատ երթուելու թեան արտօնութիւն տալ ու Պատրիարքը այդպիսի պահանջով մը վրոյ լըջօրէն պնդելու չի համարձակիր » :

«Յիշեցնենք մտատորանցեալը Օսմանցիներուն Հայաստանի վրայ տիրապետութեան առաջին օրէն մինչեւ 1896 : Հայերը կայսրութեան ամէն կողմ երթալ գալու ազատ էին՝ երկրին ընդհանուր կանոններուն համաձայն, մեղի համար արգելիչ լացառութիւն մը ընել ոչ ոք երեւակայած չէր . ու հայաստանցիները խմբովին Պօլիս կը վազէին սեռաց սեւէ արգելիքի : Ինչո՞ւ այդ բաղձագարեան ազատութիւնը ջնջուեցաւ : յեղափոխական տարածումը և կազմակերպութիւնը արգելելու համար : Հայերը դրեթէ պաշտումի վրէժակի ենթարկելով Պօլսոյ կեդրոնական կառավարութիւնը պաշտօնապէս ինքնապաշտպանութեան միջոց մը ձեռք առաւ : Պատրիարքը յանձն կառնէ՞ վատահացնել կառավարութիւնը թէ ազատ երթուելու :

ներն» եղան : Ազատութիւնը անտող լկեղծները այդ հալածուած ու թափառական աւազակներէն կազմուած է :

Ինչո՞ւ մասամբ մը, Մասը և նոր-կեանքը իրաւունք պիտի ունենան, որովհետեւ տարբեր նկատումներով յեղափոխութեան տաղանքը եղած են . իրենք չեն ուզեր որ իրենց քաղաքատիկ հերոսներու գառները այդ սեռակ աշխարհէ որ ու անպէտք կրնան ընել խանուած ըլլան, որովհետեւ իրենք մտադրած են յեղափոխական ստղաբեկն ընտրել զէթեր որ իրենց գրական ուժերով աստիճանական սալունը պնդողարդին, հաճոյալի ու զրօսալի անխթաններով : Մարդիկ սարթիւնակ աէմբրամէնթ ու հայրենասիրութիւն ունին : Ներսէս Հոսմը հրեցնի մասնաւոր ժամանակը ու քրիստոնեայիները տանջանքներով սպանած օրը իր գեղարուեստական ձայնը աւելի կատարակագործած կզգար, այնպէս որ ինքը իր վրայ կը հիւանար : Չըլլայ որ հայու ազգաներէն . դուք ալ ձեր մուսուլններն չուրեղով, ձեր գրական յօրէնեանին գափնիները դուք պատրաստէք . որովհետեւ անասն կատարեալ գիղգիկութիւն կը ըլլայ :

Ի. Գ. Ա. Կ. Յ.

Սօֆիա, 20 նոյմ.

(—)(—)

Թեանց արտօնութիւն տրուելէն անմիջապէս ետքը Պօլիս ծանր դէպքեր պիտի չի պատահին . երկիրը նորանոր յուզումներ պիտի չի պայթին : Բնաւ : Կառավարութիւնը ինչպէ՞ս ուրեմն ընդունի առաջարկներ սրոնց հետեւանքներուն համար առաջարկութիւնը ներկայացնող Պատրիարքը ինք երաշխաւոր ըլլալ չը համարձակիր :

Առ Պատրիարքը ինչպէ՞ս երաշխաւոր ըլլայ երբ ինքն ազգէն ու է երաշխաւորութիւն չունի : Ահա անցեալին , ներկային և ապագային իրականութիւնը դոր իր արտաքին բոլոր երեւոյթներէն մերկացնելով իր իսկական պարզութեանը մէջ ըմբռնելու ենք , և ասոր նման խել մը շարլաթանութիւններ :

Յարգելի ընթերցող վերոյիշեալ տողերէն ինչ կրնանք հասկանալ . ազգին օգտակար ըլլալու քանի կէտ կայ . այս յօդուածը աւելի լաւ չէր ըլլար որ Պօլսոյ թերթերէն մէկուն մէջ հրատարակել տար իբր պատասխան հայերու պահանջներուն : Կը վայելէ յեղափոխական թերթի մը այսպիսի աննպատակ յօդուածներով ազգը զբաղեցնել :

Այս մասին շատ մը գրելիքներ ունիմ բայց ժողովուրդը պարապ տեղը չի զբաղեցնելու համար կարճաբան գրելու ստիպուած եմ . բայց բոլորովին լուծիւն պահելը մեզք կը նկատեմ այնպիսի գաղափարներու արծարծման որ օգուտ մը չեն բերեր մեր այս տագնապալից վայրկեաններուն :

Հերիք է պարոն , որչափ խորեցիք ազգը ձեր կեղծաւորական գրութիւններով և ձեզ խաղալիք դարձուցիք ազգին այն մաքուր , զարգացած երիտասարդները որոնք հայրենիքի ազատութեան եռանդով վառուած ձեռք մեկնեցին յեղափոխութեան :

Բայց դուք , ողորմելի՛ արարածներ , անոնց սէրն ու եռանդը կեղծելով կեղծեցիք . փոխանակ յեղափոխութեան յառաջդիմութեան աշխատելու ձեր անձնական եսէն կուրացած՝ ազգը և յեղափոխականը իրար ձգելով , երկպառակութեան սերմ ցանելու պատճառ եղաք . ու այսօր ելեր ձեր կեղծաւոր , կործանարար բերաններով և գրիչներով միութիւն կը քարոզէք . բառ մը որ արժանի չէ ձեր շրթունքներուն արտասանելու , որովհետեւ դուք եղաք միմիայն պատճառ չիրակալուն այն ցանկալի միութեան որ մինչեւ ցարդ ազգին ամէն գասակարգին կողմանէ պաշտօնակիր կը խնդրուի :

Յ. Ա.

Վասնա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Շահնազարեան կտակը գումարին տոկոսը , որ ասկից առաջ որոշուած էր յատկացնել Արմաշի գաղթականներին , կտակարարին կամքին համեմատ պիտի արուի Սոյ ժառանգաւորաց վարժարանին : Այս կարգադրութիւնը ըրած է Յովսէփ Իզմիրեանց գրական յանցնաժողովը , որուն յանձնուած էր այս գումարի պահպանութիւնը :

— Եզրպտոսի առաջնորդական խնդիրը դեռ չէ լուծուած : Կրպատուի Պօլսո նուպար փաշայի վերադարձին , որ ան ալ մասնակցի ընտրութեանց :

— Բերայի ազլիկներու արհեստանոցը մանչերու արհեստանոցի պիտի վերածուի եղեր , որ 30ի չափ աղաքներ մի քանի արհեստներ պիտի սորվին եղեր :

Ն.Ս.Մ.Ա.ԿԱՏՈՒՓ

Բնիկ Ա. Պօլսեցի . Պ. Թադէոս Գէորգեան որ գրեթէ երկու տարի առաջ մեկնած է . կը խնդրուի ամէն անոնցմէ որոնք որ տեղեկութիւն ունին հաճին խմբագրութեան լմացնել :

Ասկից գրեթէ 3-4 ամիս առաջ անոր Ռուսմանիոյ մէջ զբոնուելը լմացուած է :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուրք կտակարարութիւնը եւրոպական Թուրքիոյ մէջ զինուորական վաշտեր աւելցնել հրամայած է . իսկ հիմա կը հրամայէ ձր Ասիական զօրաբաժիններու վաշտերն ալ շտապեցնել :

— Պօլսոյ մէջ Անգլիասէր թուրքերը համակրական ուղերձ մը պատրաստեր են Անգլիոյ համար . կառավարութիւնը այդ ուղերձը ստորագրողներէն մէկ քանին ձերբակալեր է . Անգլիոյ դեսպանը միջամտած է անոնց ազատութիւնը պահանջելով . Սուլթանը դեսպանին խոստացած է բաւականութիւն տալ , բայց կըսուի թէ իր խոստումը չը պիտի կատարէ :

— Ռուսական նշանաւոր սպայ մը Գուրիօ , ոչ մէկներալը , պիտի երթայ Թրանսպլ Պօլսեմ ըրու բանակին մէջ անգլիացիներուն դէմ կռուելու համար :

— Սերպիոյ նախկին Միլան թագաւորը , հրամայած է նախկին զինուորական նախարար Ստոնիկեփիչին երկրէն դուրս ելլալ : Վերջինս յառաարած է որ ինքը չի ուզեր հայրենիքէն հեռանալ , եթէ կուզեն թող բռնութեամբ արտաքսեն :

— Թրանսպլի պատերազմը գրեթէ նոյն վիճակի մէջ է . Պաշարուած քաղաքները դեռ առնուած չեն . անգլիացիները

կրցեր են Բէմպրէյէն դուրս ելլալ : Պօլսեմը կաշխատին ամբողջութիւններ շինել որ անգլիական զօրքերը անկարող ըլլան մտնելու անգլիական քաղաքները պաշարող պօէրներու բանակներուն : Տեղ տեղ փոքրիկ ընդհարումներ տեղի կունենան . Երկու կողմէն կը յաղթեն ու կը յաղթուին . փոքրիկ յաղթութիւններ ու պարտութիւններ : Վճռողական ոչ մի բան :

— Պօլսոյ Ամերիկեան դեսպանը շարունակ կը պնդէ որ թիւրք կառավարութիւնը ամերիկեան հպատակներուն եղած վնասները վճարէ :

— Անգլիական երկու թերթեր կը հաղորդեն թէ Գերմանական կայսրը Պոստամ վերադառնալէն յետոյ կալէսի իշխանին և Վիլիթորիա թագուհոյն շնորհակալութեան նամակներ գրած է և աւելցուցած թէ իր անգլիացիները թիւրքերու մէջ եղած բարեկամութիւնը , որ ապագային շատ օգտուէտ պիտի ըլլայ իրենց համար :

— Նշանաւոր ալպանիացի մը միւֆթի Եւսուֆ Սայիա վերին Ալպանիոյ բնակիչներու կողմէն պիտի ճամբորդէ՝ Եւրոպական դահլիճներուն՝ երկրին վիճակի մասին յիշատակագիր մը ներկայացնելու համար :

— Գերմանիա յաջողած չէ թուրքիոյ պատերազմական նաւեր շինել ուսու գործը իր երկրին մէջ ընել տալ :

Ամերիկացիք պիտի շինեն քանի մը պատերազմական նաւեր :

— Ռուսիոյ մէջ խիստ կարգադրութիւններ պիտի ըլլան կրօնական աղանդներուն դէմ . Սիւնօքին պրօֆուրորը խաւարամիտ և վատահոգի Պապէդանօսպիվ պրօշիր մը հրատարակած է Շտնուղեաններուն . Մալաքաններուն , Տուխապուրներուն և ուրիշ աղանդներու դէմ , որոնք չեն ընդունիր Օրթոտոքս եկեղեցիին հեղինակութիւնը :

— Ռուսական ոստիկանութիւնը նորէն սկսեր է հալածել ուսանողները : Տօրպատի մէջ համալսարանի տեսուչը ոստիկանութեան աշակցութեամբ գոցեր է ուսանողական քիւլը : Երկու ձերբակալուած ուսանողներ , ոստիկանութեան անպատուաբեր վարժունքներուն չը դիմանալով անձնապահ եղած են :

ԸՆԴՍՐՁԱԿ ԵՐԳՐԱՐՆԵՐ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վասնա , Ա. Զարպանիկանի գրատունը նաեւ կը գանուի ամէն տեսակ գրքերու և վիպական գրքեր . գրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրոյմ . Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյմ երու :

ԹԻՍՐՈՆ «ԱՆԿԷԼ ՍՆԱԿՕՅ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը , այս գիշեր , Գեկա . 4 , պիտի ներկայացնէ՝ առաջին անգամ ըլլալով «Վերջին ժամ» տրամագոմէտի 4 արար :

Ժիմնաստիք , աքրօպաթ և պալէթ Օր . Գաթիւնայի կողմանէ :

Վաղը կիրակի գիշեր , Գեկ . 5 , պիտի ներկայացնէ՝ «Սեւ Գրեբը» արամ 4 արար :

Ժիմնաստիք , աքրօպաթ և պալէթ Օր . Գաթիւնայի կողմանէ :

Արարուածներու միջոցին զինուորական երաժշտական խումբը հաւաքուիլ կտորներ պիտի նուագէ :

«Աւթուն օրուան ճամբորդութիւն շուրջ աշխարհ» Հռչակաւոր Ժիւլ Վէրնիի ոսմանէն թատերախաղի վերածուած՝ 11 արար և 18 պատկեր . Երկու երեկոյթի բաժնուած է , առաջին երեկոյթը Գեկա . 6ին , իսկ երկրորդ երեկոյթը Գեկա . 9ին :

Վերագրեալ թատերգութեան թէ տեսարանները և թէ զգեստները մեծ խնամքով պատրաստուած են :

Գին սովորական՝ փափաքողք երկու երեկոյթի տոմսերը կընան ընդունիլ :

Ինչպէս արդէն թատերասէր հասարակութիւնը գիտէ ներկայացումներու իրիկունները , բայց այս անգամ բացառութիւն ըլլալով յառաջիկայ երկուշաբթի դեկտ . 6ին է , որովհետեւ տօն է : Եւ կը յուսան . թէ թատերասէր հասարակութիւնը չպիտի զլանայ քաջալերել սոյն հայ գերասանական խումբը :

ՊՕՐՍԱ

Վառնա 4 Դեկտեմբեր

Վառն	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	53-57	9-9.50
ՄԻՍԻՐ	54-56	5-6.20
ԱՐԲԱ	—	—
ԵՌԻԱՅ	—	—
ՅԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	55-60	9.50-11.20
ԱՐԲԱ	38-44	6.50-7.40
ԵՌԻԱՅ	35-36	5.20-5.30
ՄԻՍԻՐ	55-57	6-7
ՏԱՐԸ	55-58	5.50-6.00
ՅԱՍՈՒԼԵԱ	100 Դիլօ	12-20

Առապա մուսալէլէի Գաթիւն 2) .60 ֆրանք հիսապը իլէ տիր .